# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

*Մայիսի 2-ին, կիրակի. - Դ. կիր. (Կարմիր Կիրակէ):*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանը: Հընթացս Սրբազան Խորհրդակատարության կատարվեց քահանայական ձեռնադրություն, որից հետո պատարագիչ Սրբազան Հայրը «Եկայք առ իս» (Մատթ. ԺԱ 29) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 121):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*Մայիսի 9-ին, կիրակի. - Ե. կիր.: Տօն Երեւման Ս. Խաչի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Այսօր ընդ ամպս լուսաւորս երեւեալ նշան փէրունական սուրբ խաչին, զի հաղթեսցուք նովաւ անօրէն թշնամոյն՝ կնիք հասպատութեան ընկալեալք ի յանձինս մեր» (Շարակնոց) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 69):

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն՝ Երուսաղեմի հայոց Պատրիարքության Ս. Հակոբյանց միաբան Տ. Վարուժան ծ. վարդապետ Գաբառաճյանի հոգու խաղաղության համար:

*Մայիսի 16-ին, կիրակի. - Զ. կիր.:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Նարեկ աբեղա Ավագյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Ես եկի զի զկեանս ունիցին, եւ առաւել եւս ունիցին» (Հովհ. Ժ10) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 71):

*Մայիսի 20-ին, հինգշաբթի. - Խ. օր Յինանց: Համբարձումն Քրիստոսի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մեսրոպ աբեղա Պարսամյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Առաքեա Տէր զլոյս քո եւ զճշմարտութիւն քո, զի առաջնորդեսցեն ինձ եւ հանցեն զիս ի լեառն սուրբ եւ ի յարկս քո» (Պատարագամատույց) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 73):

Այնուհետև, ի հիշատակ Հայրապետական Աթոռի՝ 1441 թ. Սսից Ս. Էջմիածին տեղափոխման, կատարվեց Հայրապետական մաղթանք:

*Մայիսի 23-ին, կիրակի.- Է. կիր.: Երկրորդ Ծաղկազարդ:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Տիրան աբեղա Պետրոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Օրհնութիւն որդւոյ Դաւթի, օրհնեալ որ գայ յանուն Տեառն. օրհնութիւն ի բարձունս» (Մատթ. ԻԱ 9) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 76):

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն:

*Մայիսի 30-ին, կիրակի.- Հոգեգալուստ (Պենտեկոստէ, յիսներորդ օր ի Զատկէն):*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Դավիթ արքեպիսկոպոս Սահակյանը:

Ս. Պատարագին ներկա էին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը և հնգօրյա այցով Մայր Աթոռում գտնվող Լիոնի արքեպիսկոպոս կարդինալ Ֆիլիպ Բարբարենի գլխավորած պատվիրակությունը: Հավարտ Սրբազան Պատարագի Հայոց Հայրապետը ողջունեց բարձրաստիճան հյուրերի ներկայությունը Մայր Աթոռում, որից հետո կարդինալն իր խոսքը փոխանցեց Մայր Տաճարում հավաքված բազմաթիվ հավատացյալ հայորդիներին: